ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի հունիսի 4 -ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողներն ու աշակերտները:
Ժողովը վարում էր դասղեկ Լուսինե Ազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. 2-րդ կիսամյակի և 217-2018 ուստարվա ամփոփում
ա) ուսման առաջադիմությունը 2-րդ կիսամյակում
բ) տարեկան գնահատականների ամփոփում
գ) հաճախումների արդյունքները ուսումնական տարվա ընթացքում

2. Ընթացիկ հարցեր, ամառային արձակուրդի ճիշտ կազմակերպում, էքսկուրսիայի կազմակերպում:

ԼՍԵՑԻՆ.
1 . 2-րդ կիսամյակի և 217-2018 ուստարվա ամփոփում

Ելույթ ունեցավ դասղեկ Լուսինե Ազարյանը:
Նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների 2-րդ կիսամյակի արդյունքները և նկատեց, որ այս կիսամյակում աշակերտներից շատերը աշխատասիրության շնորհիվ ապահովեցին բավականին լավ արդյունք, որը դրականապես ազդեց տարեկան գնահատականների վրա: Արդյունքում՝ դասարանում ունեցանք 7 հարվածային /Ալեքսանյան Նելլի,Գրիգորյան Անի, Բաղալյան Սվետլանա,Հովհաննիսյան Միլենա,Մարկոսյան Գոռ,Սամսոնյան Տիգրան, Գալստյան Նարե/ և 1 գերազանցիկ /Սարգսյան Միլենա/ աշակերտ:

Նշվեց նաև,որ բացակայությունների թիվը ուսումնական տարվա ընթացքում կազմել է 214 ժամ, առաջադիմությունը 100, իսկ որակական ցուցանիշը 32 տոկոս է:Կատարվել է դասագրքերի ընդունում և հանձնում՝ առանց թերությունների:

Որոշեցին.

Բարձր գնահատել դասղեկ Լ. Ազարյանի պատասխանատու և նվիրված աշխատանքը:Անել ամեն ինչ գալիք ուսումնական տարում ավելի բարձր ցուցանիշ ապահովելու համար:

2. Լսեցին.- . Ընթացիկ հարցեր, ամառային արձակուրդի ճիշտ կազմակերպում, էքսկուրսիայի կազմակերպում:

Ամառային հանգստի լիարժեք անցկացման նպատակով ծնողները առաջարկեցին կազմակերպել էքսկուրսիա դեպի Նորավանք, որի կազմակերպումը հանձնարարվեց ծնողկոմիտեի նախագահ Գալուստ Գալստյանին և անդամներին:

Որոշեցին.

Հավաքագրել անհրաժեշտ գումար էքսկուրսիայի կազմակերպման համար/ սնունդ, ապահով տրանսպորտ, ընթացիկ ծախսեր: Հանձնարարել ծնողկոմիտեի նախագահին և անդամներին ամենայն պատասխանատվությամբ կազմակերպել էքսկուրսիան՝ միշտ կապի մեջ պահելով դասղեկին և բոլոր ծնողներին:

Ժողովի նախագահ՝ ---------- (Գ. Գալստյան)
Քարտուղար՝ ---------- (Լ.Թադևոսյան)